

636.2

Բ - 14

ՊՐԱԳ. ԱՎ. ՖԱԼԱՆԹԱՐ

ԿԱԹՆԱՌԱՑ ԿՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ

III

ՆԱԽԻՐԻ ԱԶՆՎԱՑՈՒՄԸ



Գիր 20 կմ.

ՈՂԻՆԵՐԵՐԻ 7-րդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Թագպահեց Զ. ՄԵՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

24 SEP 2010

ՀՈՂՃՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

29 AUG 2011 ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍՔ
«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»

ՀԵՏԵՎՅԱԼ, ԳՐԲԵՐԸ

1. Օպերուաց անտառալին ածխատավորի 50 կ.
2. [REDACTED] Մեր անկիրները (սպառված) 20 կ.
3. Հ. Փիրումյան յեզ Ա. Մելքոնյան - ինչու ձեռնուու ին գործարանում լուղ. և շվկց. պանիր պատրաստելը (սպառ.) 30 կ.
4. Հ. Փիրումյան - Խոտարուկները և նրանց մշակության լեզանակները (սպառ.) 10 կ.
5. [REDACTED] - Հ. Խ. Ա. Հ. Հողադին Ռ- ը հնագիրքը, բացարական հարց ու պատասխաններով, մասն 1-ին, աշխատավորական հողողագործություն (սպառված) 40 կ.
6. Պ. Հեթիմյան - Թթենու մշակությունը 40 կ.
7. Պ. Հեթիմյան - Շիրամի վորդը, նրա կերպերին ու խնամքը 10 կ.
8. Խ. Յերիցյան - Կաթնառունակության գործնական ձևանարկ, մասն 1-ին (64) նու. 1n. 50 կ.
9. Կ. Մելիք-Շահներզուան - Միախոսորի մշակությունը 20 կ.
10. Ս. Քերզուին - Տառը պատգամ անտառապահին 20 կ.
11. Խ. Յերիցյան - Անհատական, թէ կոռայ. կաթնառունակություն 10 կ.
12. Հ. Հարուրյան - Բարակ, կնքիր պայմանագիր (չափածո) (սպառ.) 5 կ.
13. Ս. Խումանյան - Շարքացանը և նրա նշանակությունը 15 կ.
14. Խ. Յեր-Ենրոփոյան - Ինչպես մշակել խողի այգիները (28 նկարով) (սպառ.) 35 կ.
15. Յերենես զեսի գուց - Անդրկունիուան Յերկրացին կոմիտեի բանաձեռ պատշաճան հարցի մասին, Ա. Տագունին նախարարով (սպառված) 14 կ.

№ 51 «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 51

636.2 ԱՎ

Բ-14

ԴՐՈՒ. ԱՎ. ՔԱԼԱՆՔԱՐ

ԿԱԹՆԱՌԱՑ ԿՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ

ՈՒ

ՍԱԽԻՐԻ ԱԶՆՎԱՑՈՒՄԸ

1003
11143

ՈՒԽՍԵՐԵՆԻ 7-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Թարգմանեց Զ. ՄԵՍՅԱՆ

ՀԱԳԺՈՎԿԱՄՑՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1928

ԿԱԹՆԱՌԱՏ ԿՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

I. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱԶՄՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Ներկայումս գյուղացիական անասունների աղնվացման խնդրի վրա հատուկ ուշադրություն է դարձվում: Այդ աղնվացումը կատարվում է առանց ստարերկրյա ցեղերի ոգնության, միմիայն տեղական տեսակի լավագույն անասուններից համապատասխան ընտրություն կատարելու և նըրանցից լավ սերունդ ստանալու միջոցով:

Կաթնառատ կովը իրենից ավելի կաթնառու սերունդ է տալիս: Յուղալի կաթ տվող կովի սերունդը նույնպես, ավելի յուղառատ կաթ տվող է լինում, քան ջրալի կաթ տվող կովինը: Յեզ կաթնառատությունը չե'վ յուղալի կաթ տալու հատկությունները հաղորդվում են սերունդին վոչ միայն կովի, այլ և ցուլի միջոցով, իեթե միայն վերջինս սերվել է կաթնառատ կովից:

Ուստի, անասնապահությունը բարձրացնելու նպատակով սերունդ արտադրելու համար պետք է ընտրել բարեկազմ, շատ յուղալի կաթ տվող անասուններ:

ՀԱՅԹՈՒԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 3534
ԳՐԱԲԵՐՎԱՐ № 802 ր.
ՏԵՐԱԺ 3000

Դրսից կով առնող անտեսատերը, մեծ մասսամբ, հարկադրված ե լինում կենդանու արժանիքները գնահատել լոկ նրա արտաքին տեսքով, մյուս հատկությունների նկատմամբ՝ ըստ տիպված ե հավատալ ծախողին: Այդ տեսակետից, զնովի համար շատ մեծ նշանակություն ունի կենդանու հատկությունները հնարավորին չափ լրավ ճանաչելը:


Վորքոն կաթնառատ ե կովը, այնքան նույնամման կերից, այսինքն նույնքան արգած ծախուից՝ ավելի ոգուտ կտա, սակայն կաթնառվության չափով իրարից տարբերվում են վոչ միայն զանազան, այլ և նույն ցեղին պատկանող տարբեր կովերը: Իրենց կաթնառվությամբ տարբերվում են մանավանդ հասարակ, տեղական ցեղի չերեք չաղնվացրված կովերը: Ռուսական սովորական գյուղական կովերի մեջ, տարեկան 30—40 դույլ (370—492 լիտր) կաթ տվողների կողքին հաճախ են պատահում 150—200 դույլ (1906—2460 լիտր) տվողներ: Պարզ է, վոր վերջիններս իրենց կերն ու վրաներն արգած այլ ծախքերն արդարացնելուց բացի, տիրոջը զգալի ոգուտ կտան, իսկ առաջինները իրենց ստացած կերն ել չեն արդարացնի ու վնասից բացի վոչ մի ոգուտ չեն տա: Փորձը մշակել ե վորոշ նշաններ, վորոնցով անտեսա-

տերերը գնահատում են կովի կաթնառվությունը, ըստ վորում ամենուրեք միենույն նըշաններով ու կանոններով չեն դեկավարվում, մի քանի նշանների նկատմամբ ըսլորը համամիտ են, մյուսների վերաբերմամբ՝ տարակարձիք: Այդ նշաններից մի քանիսը առանձնապես կարենո՞ւ են, մի քանիսն ունեն չերկորդական նըշանակություն, մյուսները՝ սխալ: Գիտությունն ըստ երության քննության լենթարկելով կաթնառատության յուրաքանչյուր նշան՝ տալիս ե իր բացատրությունը և գրանով մեզ ողնում՝ կովերի անսխալ ընտրություն կատարելու գործում:

Հաճախ կյանքում կամ գրքերում թվում են կովի կաթնառատության զանազան նշաններ, ոկած գլխի նկարագրությունից՝ կուրծն ու պոչը և դժվար ե լինում հասկանալ, թե այս կամ այն նշանն ի՞նչով ե կարենը և ի՞նչ կապ ունի կաթի հետ: Յես կփորձեն վոչ միայն թվել կաթնառատության կարենը նշանները, այլ և բացատրել նրանց նշանակությունը և նկարագրությունն կակամ վոչ թե գլխից, այլ ամենից առաջ այն որդանից, վորտեղ կաթն ե գոյանում, այսինքն՝ կուրծից:

Ամենից առաջ մի քանի խոսք ասեմ ընդհանրապես կենդանիների կաղմության մասին:

Խոշոր յեղջաւրավոր անաստաները, ըստ
այն նպատակի, վարի համար նրանց պահում են
անաստաթյան մեջ, բաժանվում են յերեք տե-
սակի, այն ե՞ւ լծկան, մսացու և կաթնասու,
ըստ վորում այս անաստաների ամեն մի տե-
սակն ունի իրեն հասու կ, մյա պներից առրիբով
կազմվածքը:




Նկ. 1. Ուկրայնայի մոխրագույն լծկան յեզ:

Այդ ասարբերության հետ ծանոթ լինելը
ոգտակար ե նրա համար, վոր կովի ընարու-
թյան ժամանակ կարողանանք ճիշտ վնանատել
նրա արժանիքներն ու պակասությունները:

Լծկան անաստանի ծառայում և դաշտա-
լին աշխատանքների և սալլով ծանրոթյուններ

տեղափոխելու համար, ուստի նա պետք է լինի
ուժեղ և ամրակազմ, այսինքն, ունենա հաստ
և ամուր վոսկրներ, կրծքի և ուսի զարգացած
մկաններ, կարծ և ուժեղ վիզ, խոր և առողջ
կուրծք, կոպիտ և հաստ կաշի:

Մսացու անաստանի այն մասերը պիտի
ավելի զարգացած լինեն, վորտեղ շտո միս ու
ձարով են հավաքվում, և բնդհակառակն թույլ
դարձացած՝ պակաս արժեքավոր մասերը, վո-
րոնք են նրա սակավարժեք մասերը, ինարկե



Նկ. 2. Մսացու տիպի կով:

վոսկորները, գլուխը, վոտքերը, հետո վորը:
Սրժեքավոր են՝ վիզը, ավելի արժեքավոր՝ մեջ-
քը, իսկ ամենաարժեքավորը՝ աղղոքերը, սուկին,

ուսերն ու կուրծքը, այսինքն առջևի և հակի մասերը:

Դրա համար ել, մսացու անասունների ազգբերը խիստ զարգացած են — լայն ու կը լորիկ, մեջքն ու գավակը լայն, մոպի, ուսերը լայն ու կլոր, վիզը կարճ ու մոռա, գլուխը փոքր, վոտքերը կարճ ու բարակ (աճո նկար 2): Ներքին ինչպիսի հատկություններ են կապված լծկան ու մսացու անասունների կազմվածքի հետ:

Մինչդեռ կաթնառու անասունը պետք է ընդունակություն ունենա կերը կաթի վերածելու, մսացուներն այդ ընդունակությունից դուրկ են. սակայն զբա փոխարեն նրանք կարողանում են միս ու ճարպ կուտակել և շատ գերանալ:

Լծկան անասունները քիչ արդյունք (հետեաբար և կեր) են գործադրում կաթ առաջացնելու և միս ավելացնելու վրա, բայց ընդունակություն ունեն իրենց արյան մի մասն ալբերու և աշխատանքի համար ուժ կուտակելու:

Ինչպես տեսնում եք, կաթնառու անասուններն իրենց որգանիզմի հատկությամբ հիմնովին առընթերվում են մսացուներից և լծկաններից:


Կաթնառատ կովին ինչքան ուզում ես կերակրի, իր կթվելու շրջանում նա ուժը չի ավելացնի, չի գերանա, վորովհետեւ նա իր ամբողջ կերը կաթ արատգրելու վրա չե գործադրում և չի կարող միս ու ճարպ կուտակել:

Այդ ընդունակությունների համեմատ ել ձեւակերպվում ե նրա կազմվածքը: Նա չի կարող կոպիտ փուկորներ, մսալի ու գեր ազգբերը, մեծ մնդավ կամ բոխախ ունենալ: Դրա փոխարեն զարգացած են նրա մարմնի և որդանիզմի այն մասերը, փորոնք նպաստում են կաթ արտադրելուն, և վորովհետեւ կաթ արտադրելու նրա ամենազլասագոր որգանը կուրծն ե, ուստի կաթնառատության նշանները քննության առնելիս, սկսենք կուրծից և ցուց տանք, թե ինչ կապ ունեն միւսն նշանները կուրծի, կամ կովի կաթ տալու ընդունակությունների հետ:


2. ԿԱԹՆԱՌԱՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԵՐԸ

Կուրծը. — Կաթնառու անասունների կուրծը (կովի, վոչխարի, այծի, մատակի և ոլին) բաղկացած ե միջուկից և արտաքին փափուկ մասերից: Միջուկը կուրծի հենց այն մասն ե, որ կաթն ե գուանում: Նրան մենք անվանում ենք կարեազեղա:

Յեթե կուրծը կտրելու լինենք, կտեսնենք,



Նկ. 3. Հողանդական ցեղի կաթնառատ կով:



Նկ. 4. Խոլմոգորյան ցեղի կաթնառատ կով:

վոր միջուկը կազմված է իրար հետ շարակցական հյուսվածքով և մասն մսալին թելիկներով ու ճարպով միացած առանձին խիլավոր մասնիկներից:



Նկ. 5.

Կաթնազեղձի խիլավոր մարմինները, կաթնառաթիկներով յեվ կաթնառատար իտողավակներով:

Նկ. 6.

Կաթնարշտիկների (ա) յեվ կաթնառատար իտողավակների (ի) կաթնառատար իտողավակներով:

Յեթե այդ խիլերը կտրենք ու մանրադիտակով նայենք, նրանց մեջ կնկատենք խողովակ, վորի հետ միանում են ավելի մասն մազական (տես նկար 5) խողովակներ։ Ամեն մի խողովակի ծայրին կա փակ բշտիկ (տես նըկար 6), հենց այդ բշտիկներում ել գոյանում ե կաթը։ Կաթնազեղձը լի յի այդպիսի անթիվ

բշտիկներով, նրանց արանքում գտնվում են շարակցական հյուսվածք, մկաններ, ձարակ և բազմաթիվ արյունատար անոթներ, վորոնց մի մասը մաքուր արյուն և մատակարարում բշտիկներին, իսկ մյուսը՝ գրադադրված անմաքուր արյունը հետ, դեպի սիրտը տանում: Յերբ բշտիկներն ու նրանց միացնող կաթնատար խողովակները կաթով լցվում են, կուրծը մեծանում է, ուռչում, պնդանում: Կթելուց հետո, մզգած բշտիկները սեղմանում են, կաթնատար խողովակները դատարկվում և ամբողջ կուրծը ուետինի պարկի պես թուլանում է, փափկում, փարբանում: Սակայն զա տեղի և ունենալ այն գեղքում, յիթե կուրծը, (կամ ավելի ճիշտ՝ կաթնագեղձը) հարուստ և կաթնարշաբիկներով և նրանց արանքի մսալին ու ճարպային մասերը քիչ են: Այդպիսի կուրծը մինչև ծնելու ե փոքր, բայց ծնելուց առաջ սկսում ե ուռչել և ամեն կողմից մեծանալ: Կաթով լի ժամանակ մեծ և ուսած և լինում, կթելուց հետո փոքրանում է, կծկվում, ճորում: Մկաններով (մսալին թելիկներ) ու ճարպային մասերով ճարուստ կուրծը շարունակ փրփած ու պինդ և լինում և դժվար ե կթվում (ճարպն ու միսը խանգարում են): Այդպիսի կուրծը մենք անվանում ենք մսոտ, կամ ճարպոտ: Կաթնագեղձը լանգով ու յեր-

կարությամբ գոտիներով բաժանված ե չորս մասի: Ամեն բաժնի տակ կա մի պառկի:

Կաթնառատ կովի կուրծը պետք ե լինի մեծ, ծավալուն և չորս կողմի վրա հավասարապես զարգացած: Կուրծի 4 բաժիններն ել պետք և լավ զարգացած լինեն, վորից նա վոչ թե յերկար ու նեղ, այլ քառանկյունի ձև և ստանում:

Մսալի ու ճարպոտ կուրծը ինչքան ել մեծ ու գեղեցիկ լինի, լավ համարվել չի կարող: Ինչպես ասացի, լավ, վոչ ճարպոտ կուրծը կաթով լի ժամանակ պետք ե լինի մեծ, փրփած ու պինդ, իսկ կթվելուց հետո՝ փոքր, փափուկ ու ճլորած: Շարունակաբար թե լիքը և թե դատարկ ժամանակ կախ ընկած ու կովի ազդրելին զարկվող կուրծը պիտի վատ համարել ու խուսափել նրանց:

Լավն այն կուրծն ե, վոր շատ կաթն և տանում, կաթը լցվելիս տարածվում և ամեն կողմ ու անպես ե կպած մարմնին, վորը չլ տարուբերում, կենդանուն չի անհանգստում և չի կեղտուավում:

Պարզ ե, վոր յերկար ու նեղ, կախ ընկած կամ ճարպոտ ու մսալի, հետեւապես՝ պնդակիթ կուրծը չի կարող լավ համարվել:

Կուրծի պաշարը.—Լավ աշխատող կուրծը

բերնե բերան լեցվում ե կաթով ու չորս կողմի
վրա մեծանում ե, փքվում: Կուրծի անարգել մե-
ծանալու համար անհրաժեշտ ե, վոր նրա կաշին
վրան քիվ կպած չլինի ու չխանգարի կաթնա-
դեղձի ազատ գործունելությանը:

Կաթնառատ կովի կուրծի կաշին լայն ու ազատ
և լինում, վորից կուրծի վրա մի շարք ծալքեր
են գոյանում ու հնարավորություն առլիս կաթ-
րագեղին անարգել մեծանալու:

Քանի վոր այդ ծալքերը կուրծի մեծանա-
լու համար պաշարատեղ են հանդիսանում, ըն-
դունված ե նրան անվանել «կուրծի պաշար»:
Պաշարի մեծությունը փորձելու համար, յերկու
մատով բռնում են ծալքերից ու ձգում: Վորքան
կաշին հեշտությամբ ե ձգվում ու միջուկից շատ
հեռանում՝ այնքան լավ: Այդ փորձը կատարում
են կուրծի առաջի ու հետեւ կողմից: Կուրծի
կաշին պետք ե նուրբ ու շարժուն լինի, իսկ
պաշարատեղի ծալքերը՝ շատ ու ամեն կողմի
վրա յերկար ձգվող:

Ուսուկները պետք ե այնպես դասավորված
լինեն, վոր կթելը հետ ու հարմար լինի, ուստի
պատւկները պետք ե լինեն վոչ կարճ, վոչ բա-
րակ և վոչ ել շատ հաստ ու յերկար: Նրանք
պետք ե լինեն դրանաձեւ ու հիմքի մոտ, այսովոք՝
անմիջապես կուրծի տակ, քիչ հաստ, վորը հեշ-

տացնում ե կթելը: Պատւկները պետք ե իրարից հե-
ռու լինեն ու նայեն ուղիղ դեպի ցած, թեք
ուղղություն չպետք ե ունենան՝ վոչ դրսի և
վոչ ել ներսի կողմը:


Կաթներակները. — Կուրծը կաթ արտադրելու
համար իր նյութն ստանում ե արյունից, գրա-
համար ել, կուրծը վորքան շատ կաթ ե արտա-
դրում, այնքան ել շատ արյուն ե պահանջում,
այսինքն՝ այնքան շատ արյուն պետք ե հոսի
դեպի կուրծը:

Արյունը դեպի կուրծն ե հոսում հաստ յերակ-
ներով, վորոնք բաժանվելով մանր, հաղիվ նշմա-
րելի խողովակների արյունը ցրում են ամրող
կուրծի մեջ. իսկ ոգտագործված, անմարուր
արյունը հավաքվում ե կուրծի առջևի մասից
յեխող մեծ յերակը, վորը փորի տակով հասնե-
լով մինչև նրա մեջ տեղը, մարմնի ներսն ե
մտնում և արյունը հասցնում սիրտն ու թոքերը՝
մաքրելու համար: Այդ յերակը կարելի յէ վոչ
միայն ձեռքով շոշափել այլ և հասարակ աչքով
տեսնել:

Նրան ընդունված ե անվանել կաթներակ,
թեև ինչպես տեսնում եք, այդ անունը չի հա-
մապատասխանում նրա կոչմանը, քանի վոր
նրանով վոչ թե կաթն ե անցնում, այլ արյուն:
Սակայն այդ յերակն ունի ուրիշ տվելի ճիշտ

անուն, այն եւ կաթնալին արյունագարձ յերակ, այսինքն յերակ, վորով հոսում ե ոգտագործված արյունը: Բատինքլան հասկանալի յէ, վոր յեթե կուրծից շատ ոգտագործված արյուն ե հոսում դեպի սիրար, շատ ել մաքուր արյուն պիտի հոսի դեպի նա:

Կաթներակը պետք ե լինի հաստ, ձյուղագործված, արնով խիստ լցված, վորը կարելի յե ստուգել ձեռքով շոշափելով:



Դր. 7. Լավ զարգացած կարծ յեվ նրա նետ կապված նշաններ, Յ—կաթներակ, ա—կաթներակի ճյուղագործմը կործի վրա, Յ—կաթնափուլ:

Կաթներակները պետք ե լավ նկատվեն նաև կուրծի վրա: Այդ յերակներն անցնում են

լավ, կաթնառատ կովի կուրծի արտաքին մակերեսուցիթի վրայով ու վորքան շատ են ճյուղագործված, վորքան վալորապտույտ և ուսուցիկ են, այնքան լավ:

Կաթնափուլ.—Այսպես ե կոչվում կովի փորի տակի այն փոսիկը, վորը գոյանում ե կաթներակի մարմնի ներսը մտնելու տեղում:

Վորքան կաթներակը հաստ ե ու արյունով լավ լցված, այնքան ել այդ փոսիկը խորն ե լինում: Ուստի խաթնափուլ պետք ե լինի լախ ու խոր: Կաթնափոսի խորտթյունը ստուգելու համար պետք ե մատով հուպ տալ կովի փորի տակի այն տեղը, ուր վերջանում ե կաթներակը:

Կաթնահայելին. — Կովի մարմի մազի ուղղությունը վերից վար ե, իսկ կուրծի թափամազի թեքվածքը—ընդհասակը, ներքելից վերայդ նույն ուղղությունն ունեն նաև կովի աղղորերի յետեկի մասի մազերը: Այս տեղ, ուր այդ մազերը հանդիպում են մարմի վերից—ցած թեքված մազերի ներ՝ գոյանում են վոլորտներ, վորոնք կարծիս սահմանագծում են կուրծի շըրջանը: Կովի մարմնի այդ տեղը ծածկված լինելով հեշտությամբ աչքի յէ ընկնում և կոչվում է «կաթնահայելի»: Վորքան լախ ե ու բարձր և դեպի պոչն և տարածվում կաթնահայելին, այն-

Հ
0
0
|
4
3

քան լավ նշան և համարվում: Կաթնահայելուն
առաջ շատ մեծ նշանակություն ելին տալիս,
սական հետագայում համոզվել են այդ նշանի
սխալ լինելու մեջ:

Ներկայումս մենք կաթնահայելուն նույն
նշանակություն ենք տալիս, ինչ վոր կուրծի
պաշարի ծալքերին, նկատի առնելով, վոր հա-
յելին ել, պաշարի ծալքերի նման, կուրծի կաշ-
վի շարունակությունն ե կազմում, հետեապես,
վորքան մեծ ե կաթնահայելին, այնքան կուրծը
լավ ե զարգացած:

Մյուս նշանների մեջ, պաշարատեղի կող-
քին կաթնահայելին ել վորոշ նշանակություն ունի:

Վերոհիշյալ բոլոր նշանները, անմիջական
կապ ունեն, թե իրար և թե կուրծի հետ, սա-
կայն կան ելի ուրիշ շատ նշաններ, վորոնք թեև
անմիջական կապ չունեն կաթնազեղձի հետ,
բայց և այնպես անուղղակի առնչություն ու-
նեն նրա և կովի կաթնառատության հետ: Այդ-
պիսի նշաններից կթվեմ հետեւալները. —

Կամքին. — Մինչև այժմ թվածու նշանները
սերտ կապ ունեն կուրծի հետ և հասկանալի յե,
թե ինչ նշանակություն ունեն նրանք կովի
կաթնառատության համար:

Բայց ինչ առնչություն ունի կաշին կուրծի

հետ և ինչպես կապել կաշի հատկությունը —
կաթնառատության հետ:

Կաշի մեջ կան բազմաթիվ մանր, ալսպես
կոչված՝ ճարպային դեղձեր, վորոնք ճարպ են
արտաթորում, կաշին ու մազերը յուղելու հա-
մար:

Յեթն կաթնազեղձը լավ ե զարգացած,
հիմք չկա յենթաղբելու, վոր մյուս զանազան
տեսակի հյութեր (մարսողության, ճարպային,
թուք և այլն) արտադրող գեղձերն ել, վորոնք
նույնպիսի կազմություն ունեն ինչ վոր կաթ-
նազեղձը, նույնպես լավ զարգացած չեն լինի:
Մյուս կողմից՝ յեթե կուրծի կաշին նուրբ ե,
փափուկ ու դյուրաշարժ՝ ամբողջ մարմնի կա-
շին ել նույն հատկությունը պիտի ունենա:

Ասածիցս պարզ ե, վոր կաշին ել վորոշ
կապ ունի կուրծի հետ և նա յել պիտի կուրծի
կաշի նման բարակ, փափուկ, դյուրաշարժ լի-
նի ու յերկու մատով կողքից, վորից կամ ու-
սից քաշելիս՝ լավ ձգվի, յերկարի: Կովի կաթ-
նառատությունը վորոշելու ամենակարևոր նշան-
ներից մեկը՝ կաշին ե. իսկ մի քանի յերկընե-
րում նրան ավելի մեծ նշանակություն են տա-
լիս, քան կուրծի պաշարին և կաթներակներին:
Լավ կաշի ունեցող կովերին կարելի յե
ճանաչել առանց նրանց ձեռք տալու, հեռվից:

Յեթե լավ դիտելու լինենք, որինակ, արտաներում, կաեսնենք, վոր այդպիսի կովերի կաշն դլուրաշարժ ե և վիճերին վնչ միայն ծալքեր, ազ և բազմաթիվ մանր կնճոներ են գոյանում, վորոնք կովի շարժումներից շարունակ ծածանվում, խաղում են: Յետերից նայերիս կաեսնենք, վոր լավ կաշի ունեցող կովի կուրծի պաշարն ել կազմված և բազմաթիվ ծալքերից:

Մազը, յեղջուրներն ու կեղակները.— Յեթե կաշին լավ ե սնկում, քնքուց ե ու շատ ճարպ և արտադրում, լավ սնկող ու ճարպի գեղձերով առատորեն ոծվող մազն ել պետք և քնքուց, փափուկ, փողորկ ու փայլուն լինի: Կաշու հաստությունն ու փայլը, ի հարկե, սերտ կապ ունի կենդանու կուշտ լինելու հետ, ստկան միատեսակ կշտության պայմաններում կաթնառատ կովի մազն ավելի լավ տեսք կունենա, քան փափինը: Յեղջուրներն ու կճղակներն ել նույն մազից են առաջանում (դա հեշտությամբ կարելի յէ նկատն հորթերի վրա, վորոնց նոր գուրու յեկող յեղջուրները թաղիքացած մազի կուտերի յին նմանվում) ուստի, կաթնառատ կովի յեղջուրներն ու կճղակները պիտի լինեն ուղիղ, վողորկ և փայլուն: Մազի, յեղջուրների ու կճղակների այդ հատկությունը կովին արտաքուստ շատ գեղեցիկ տեսք են տալիս:

Վոսկրակազմը.— Ինչպես զրուցիս սկզբում բացարեցի, կաթնառատ կովի վոսկրակազմը պետք ե լինի քնքուց, նուրբ ու կանացի: Կթի կովը չի լծվում և կարիք չունի մեծ ուժի, ուժեղ մկանների, ուստի նա պիտի լինի քնքուց, և քանի վոր ամբողջ որդանիզմի հիմքը վոսկրակազմն և հանդիսանում՝ նա յել պիտի լինի նուրբ ու քնքուց, բայց վոչ թուլլ: Վոսկրակազմի կոպտությունը նկատելի յէ գլխից, վոտքերից և յեղջուրներից: Գլուխը պետք ե լինի փոքր, քնքուց և վոչ մսալի: Յեղջուրները՝ բարակ, քնքուց: Աչերը՝ բարի, հեղ, բայց վոչ քնած: Վոտինը պիտի լինեն բարակ, քնքուց: մանավանդ հետին վոտների վոսկրոները՝ տափակ, բարեկազմ: Բարձրավոտ կովերից շատ քչերն են լինում կաթնառատ, դրա համար ել կաթնառատ կովի ընարություն կատարելիս, պետք ելավ ուշք դարձնել, վոր վոտքերը մարմնի համեմատությամբ կարճ լին, իսկ յետեի վոտքերը առաջնից հեռու, ուրիշ խոսքով իրանը չպետք ե շատ վեր քաշված լինի: Յետեի վոտքերի միջի տարածությունը պետք ե մեծ լինի, այսինքն, վոտքերը պետք ե իրարից հեռու լինեն, վորպեսզի կուրծը զարգանալու և լցվելու աղատ տեղ ունենա: Յետեի վոտքերը իրարից մոտ լինելուց՝ կուրծը սղմվում ե, ճընչ-

վում, վորքերին եւ քսվում և չի կարողանում կողքերի վրա լայնանալ. բացի դրանից, ամառը ըրտնում, ահածություն եւ պատճառում և ազդում կաթի վոչ միայն քանակի, այս և վորակի վրա:

Փորը.—Վորքան կովը կարողանա շատ կեր ուտել ու նրանից շատ կաթ արտադրել, այնքան ի հարկե ավելի ձեռնառւ եւ. վորպեսզի կովը կարողանա կերը լրիվ չափով ոգտագործել՝ կաթ արտադրելու համար, նա պետք եւ բավականաշափ ժամասակ ունենա հանգիստ վորոճալու համար, իսկ դա հնարավոր եւ այն դեպքում, յերբ կովի ստամոքսը բավականաշափ մեծ եւ ու նա իր անհրաժեշտ պաշարը միանդամից ներս ընդունելով նստում եւ ու հանգիստ վորոճում: Դրա համար ել կաթնառատ կովի փորը պետք եւ լինի վոչ այնքան մեծ, բայց ծավալուն, այսինքն՝ կոր, կոր կողերով, բայց չկախված: Կախ ընկած փորը նրա թուլությունն եւ ապացուցում, վոր ցանկալի չի:

Կոնիքը.—Կովն իր ելությամբ մայր եւ, ուստի նա այնպիսի կազմվածք պիտի ունենա, վոր իր արգանդում կարողանա ուժեղ, առողջ ու խոշոր պտուղ մեծացնել և հեշտությամբ ծնել: Ծնված հորթը վորքան մեծ և ուժեղ լինի, այնքան ել շատ սննդի պահանջ կունենա, հետեապես, մայրն ել այնքան շատ կաթ պիտի

արտադրի: Ուստի, լավ, կաթնառատ կովի կոնքը (գավակը) պետք եւ լայն և ուղիղ լինի, դրա համեմատությամբ ել հետուաքը պետք եւ լինի լայն ու վոչ թեք:

Կուրծիք. Շատ կաթ տվող կովը, շատ ել արյուն պետք եւ անց կացնի կուրծի միջով՝ կաթ արտադրելու համար. բայց վորովհետեւ արյունը կարիք ունի շարունակաբար նորոգվելու և մաքրելու, ուստի թոքերը պետք եւ լինեն առողջ և կրծքավանդակը՝ լայն: Կաթնառատ կովը մշտապես մայր եւ, նա կարճատել ընդհատումներով հղիանում եւ, իր արգանդում կրում եւ պտուղը, վորը մեծանալով՝ ճրնշում և մոր կուրծքն ու ծանրացնում նրա շրմաշուությունը. բացի դրանից, քանի վոր պտուղը արգանդում չի շնչում, նրա արյունն ել եւ մոր թոքերում մաքրվում:

Մյուս կողմից ել շատ կաթ ստանալու նպատակով, մենք աշխատում ենք կովին կուշտ կերակրել, և յիթե նրա կուրծքը փոքր եւ ու նեղ, լցված ստամոքսն ել իր հերթին եխանգարում շնչառությանը: Դրա համար ել կուրծքը պետք եւ լինի առողջ, լայն ու խոր, այսինքն՝ դեպի ցած զարգացած: Բայց չափաղանց զարգացած կուրծքն ել, ինչպիսին ունենալու են ծկան ու սացու անտառները, նույնպես

ցանկալի չի, դրա համար ել կովի կուրծքը խոր լինելով հանդերձ՝ պետք ե լինի չոր ու վոչ մեծ բոխախով:

Ընդհանուր Տեսք. — Բոլոր ասածներից պարզ ե, վոր կաթնառատ կովը պետք ե ունենա նուրբ ու քնքուշ, ինչպես ասում են, կանացի կաղմածք: Նա չի կարող մսացու անառունի պես գեր ու մսալի և լծկանի պես ուժեղ ու կոպիա լինել: Նրա կաղմածքն ավելի քնքուշ ե ու չոր, վոսկորները յերեսում են ու հեշտությամբ շոշափվում: Կաթնառատ կովի վոտքերը կարճ են, իրանը յերկարավուն, վիզը բարակ, յերկար ու շարժուն, վոր արածելու համար շատ ավելի հարմար ե, քան կարճ ու ծանրաշարժ վիզը: Մեջքն ուղիղ ե, վոչ գովափոր և վոչ սապատափոր: Թեթևակի գովափոր մեջք ունենում են ծեր և շատ ծնած կովերը:

Թերապտուկներ. — Յերբեմն լավ կովերն ունենում են լրացուցիչ, անդարբացած պառուկներ, վորոնք կոչվում են թերապտուկներ: Թե՛ս այդ պառուկները հազվագյուտ գետքում են կաթ տալիս, բայց և այնպես դա ապացուց ե կովի կուրծի լավ գարգացած լինելուն, ուստի լավ նշան և համարվում:

Բացի հիշատակածներից, կան ելի մի շարք ուրիշ նշաններ, վորոնցից մի քանիսը

կապ ունեն վերը թվածներիս հետ, մյուսները պատահական բնույթի են կրում և վերջնականապես ստուգված չեն: Դրանցից թվենք մի քանիսը:

Կողերը. — Կաթնառատ կովի կողերը մյուս վոսկորների նման պետք ե լինեն բարակ և տափակ: Վերջին կողերի մեջի տարածությունը մեծ պիտի լինի: Սովորաբար այդ տարածությունը չափում են մատներով, բայց ըստինքցն հասկանալի յե, վոր այդ չափն անորոշ ե, քանի վոր մարդկանց մատները տարբեր են: Բացի զրանից, ջանել ու պատավ կովերի կողերի մեջի տարածությունը մեկ չի լինում: Ճերանալուց ու շատ ծնելուց այդ տարածությունը լայնանում է, ուստի ամեն մեկը, շատ փորձեր կատարելուց հետո, իր մատներով վորոշ չափ պիտի մշակի, այն ել ջանել ու պատավ կովերի համար զատողան:

Սովորաբար այն լեռանկյունածե խոռոչն է, վոր գոյանում ե փորի աճուկի մոտ՝ զբանակը տակ: Վորքան այդ փոսիկը մեծ ե ու ձեռքով սղմելիս ավելի ե խորանում, այնքան ավելի լավ նշան են համարում: Այդ նշանը թեև կաթնառատության հետ անմիջական կապ չունի, սակայն ապացուց ե կովի կաղմածքի քնքշության:

Պոչը. — Համարյա տմենուրեք յերկար պոչը
լավ կաթնատվության նշան են համարում ու
վորքան յերկար, այնքան լավ. ըստ փորում
կարծում են, վոր պոչի ծայրը (առանց փնջի)
ցատկահողից ցածր պիտի լինի: Արխանգելսկի
նահանգում պոչին առանձնահատուկ նշանա-
կություն են տալիս. այնտեղ կարծում են, թե
պոչը վորքան յերկար լինի, այնքան կովը ծնե-
լուց հետո կաթնատվությունը յերկար կպահի ու
շատ չի պակասացնի իր կիթը:

Յերկրորդական կաթնափոսերը. — Կան յե-
տեր և առջևի կաթնափոսեր: Յետերնը ան-
վանում են այն խորշ, վոր շոշափվում ե ազ-
գրի յետերի կողմում: Մատով սեղմելիս, կար-
ծես ազգը յերկու մասի յե բաժանվում և
վորքան մատը խորն ե մտնում փոսի մեջ՝ այն-
քան ավելի լավ նշան ե համարվում: Առաջի
կաթնափոսը համարում են զգի և ուսի ա-
րանքի թաթով սեղմելիս՝ գոյացող փոսը: Այդ
յերկու նշաններն ել, յեթե միայն վորեւ ար-
ժեք ունեն, դա ա'ն ե, վոր կովի կազմվածքի
զորությունն են ապացուցում: Ականջի կեղտն
ու մի քանի ուրիշ նշաններ, ինչպես, որինակ,
պոչի ծայրի դեղին թելը, աչքերի կողերի դեղ-
նությունը, բերանի անկյունների հաստո-

թյունը համարում են կաթի յուղալիության
նշաններ:

Այդ նշանները գուցե և ունեն վորեւ նշա-
նակություն, սակայն ստուգման կարիք ունեն:

Հատինքյան հարց ե առաջանում. — կաթնա-
ուատության այդ բազմաթիվ նշաններից վհրոնք
են ավելի կամ պակաս չափով վստահելի, և
առհասարակ կմն ստույգ նշաններ:

Առաջին հարցիս ես պատասխանեցի նրա-
նով, վոր այդ նշանները սկսեցի թվել վորոշ
կարգով, նախ՝ ավելի, ապա՝ պակաս կարեորու-
թյուն ունեցողները:

Ինչ վերաբերում ե յերկրորոդ հարցին,
պետք ե ասեմ, վոր առհասարակ չկա վոչ մի
նշան, վոր ըստինքյան, առանձնապես վերցը-
րած, կարելի լինի միանդամայն ստույգ ու
վստահելի համարել: Միշտ պետք ե հաշվի առ-
նել բոլոր նշանների հարակցությունը, ըստ
վորում անհրաժեշտ ե, վոր գլխավոր նշանները
այնուամենախիվ առ յերես լինեն, այսինքն,
այն ե՝ կուրծը, կրծապաշարը, կաթներակները,
կաշին և վոսկրակազմը:

Բացի դրանից, պետք ե ուշագրություն
գարձնել նաև կենդանու բարքի վրա: Խրանող,
չար, պողածարաւը դյուրսկրգիռ և աքացի ալ-
վող կովերը թե իրենք են սակավակաթ լի-

նում և թե իրենց արատներով, կամ ջղայնությամբ վարակում, փշացնում են նաև միուս կովերին: Ուստի, այդպիսի արատավոր կովերից պետք է խուսափել և գնելու ժամանակ կովերին վոչ միայն պետք ե ձեռք տալ, արհուդել, ազ և կթել, վորից թե նրանց բարքն ու բնավորությունն ե իմացվում և թե մյուս կարեր պակասությունները: Եինում են կովեր 1—2 կուրացած (անցքը փակված) պտուկներով, կործի 1—2 բաժանմունքը պնդացած, կամ թե չե մեծ քանակությամբ գորտնուկներով (խիլերով), այն ել պտուկների անցքերի մոտ: Վերջապես, պետք է տնդեկանալ կովի առողջության մասին, թե չի տառապում արդյոք վորեն հիվանդությամբ, որինակ, թոքախտով, հեշտոցի բորբոքումով, հաճախակի կրկնվող վիշտումներով, արգանդի դուրս ընկնելով և այլն:

3. ՆԱԽԻՐԻ ԱԶՆՎԱՑՈՒՄԸ

Մեր թված բոլոր նշաններն անհրաժեշտ ե խմանալ՝ անհայտ ծագում ունեցող կովեր գնելիս չխաբվելու համար: Իսկ յերբ կովը գնում ենք հայտնի տնտեսությունից, կամ թե չե ցանկանում ենք սեփական նախիրից բնարություն կատարել, նրանցից լավ, կաթնառատ սերունդ և նոխիրն ազնվացնելու դիտավորու-

յթամբ, պետք է նորից վորոշ կանոններ իմանանք, վորոնցից դիմավորները հետևյալներն են.

Մագումը. Կենդանու արտաքին կազմությունից բացի, Յ-րդ սերունդից մյուսին և հաղորդվում նաև կաթառատության և յուղալի կաթ տալու հատկությունները:

Հաճախ նույնանման կազմվածք ունեցող կովերը կաթառատության չափով իրարից տարբերվում են ու այդ տարբերությունը յերեմն շատ մեծ է լինում: Դրա համար ել, տոհմացու (սերունդ արտադրելու համար) հորթեր ընտրելիս, կամ ուրիշի նախիրից կով գնելիս պետք է տեղեկանալ, թե նրա մայրը Բնչակիսի կիթ և ունեցել և հայրը Բնչ ծագում, այսինքն՝ նոր մայրը կաթնառատ ե յեղել, թե չե: Յեթե կովի մայրն ու տատը կաթնառատ են յեղել, կարելի է վստահ լինել, վոր նա իր տոհմի պատիվը չի արտատվորի: Պետք է լավ դիտել նաև ցուլին, թե կաթնառատության նշանները Բնչ չափով են արտահայտված նրա վրա, գրլիսավորապես ուշադրություն դարձնելով նրա վոսկրակազմի, կաշու, դիլի, մեջքի զծի և, վերջապես, պտուկների վրա, վորոնք հաճախ կախված են լինում նրա ձվակալից: Այդ ծծերն ել

կովի անզարդացած ծծելի նման, լավ նշան են
համարվում:

Կիթի կայսերական շաբաթական գործառքական կովի կաթնառատության չափը՝ նրա նոր ծնած ժամանակվա որական կիթով են վորոշում. տառամ են՝ նոր ծնած կովը որական տալիս ե ալպան ֆունտ, բաժակ կամ շիշ կաթ, կարծելով, թե այն կովն ե ավելի կաթնառատ, վորը նոր ծնած ժամանակ ավելի կաթն ե տալիս. Բավական ե միայն վորեն սնառեսության մեջ նոր ծնած կովի սկզբնական կիթը հասնեմատել նրա մի տարվա ընթացքում տված կաթի ընդհանուր քանակի հետ՝ համոզվելու համար. թե ինչպես շատ հաճախ կովի որական կիթը չի համապատասխանում նրա տարեկան կիթին. Դրա համար ել կովի կաթառատության չափն ու արված ոգուար վորոշում ե նրա տարեկան կիթով. Այդ հանգամանքը բացատրվում ե նրանով, վոր մի կով իր սկզբնական կիթը լերկար ե պահում, իսկ մյուսը՝ շուտ իջեցնում, վորի հետևանքով, չնայած իր սկզբի բարձր կիթին, տարեկերջի հաշվով քիչ կաթ ե տալիս:

Ահա կյանքից վերցրած մի քանի որինակ:
Հունվարին ծնած չորս կով տալիս ելին.

Կովի համար	Օրական կիրք Փունիերով										Տարեկան կիթը
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	
№ 1	36	30	23	20	15	9	6	—	—	—	139 դուր
№ 2	22	20	19	16	16	18	10	7	5	4	137 *
№ 3	18	19	18	18	16	16	12	9	8	6	144 *
№ 4	35	32	32	30	27	32	19	15	8	6	5 229 *

Կովի համար	Օրական կիրք Կիլոգրամներով										Տարեկան կիթը	
	1	2	3	4	5	6	7	8	9	10		
№ 1	14,7	12,3	9,4	8,1	6,1	3,7	2,4	—	—	—	1709,6 լ.	
№ 2	9,0	8,1	7,8	6,5	6,5	7,4	4,00	2,8	2,0	1,6	1685,0 *	
№ 3	7,4	7,8	7,4	7,4	6,5	6,5	4,9	3,6	3,2	2,5	1,6	1771,0 *
№ 4	14,3	13,1	13,1	12,3	11,0	13,1	7,8	6,1	3,2	2,5	2,0	2816,5 *

Դուք տեսնում եք, թե առաջին կովը, վորը համաձայն իր սկզբնական կիթի պետք է վոր բոլորից կաթնառատը լինել՝ տարեկան հաշվով տպել ե համարյա նույնքան, վորքան լերկորդը, պակաս, քան լերրորդը և շատ ավելի քիչ, քան չորրորդը. Յերրորդ կովը թե՛ն ծնան ժամանակ տուաջինից կրկնակի չա-

կովի անզարդացած ծծելի նման, լավ նշան են
համարվում:

Կիթի կայսերական շաբաթական գործադրությունը.— Շատերը կովի
կաթնառատության չափը՝ նրա նոր ծնած ժա-
մանակվա որական կիթով են վորոշում, ասում
են՝ նոր ծնած կովը որական տալիս ե ալպան
ֆունտ, բաժակ կամ շիշ կաթ, կարծելով, թե
այն կովն ե ավելի կաթնառատ, վորը նոր ծ-
նած ժամանակ ավելի կաթն ե տալիս. Բավա-
կան ե միայն վորեւ անտեսության մեջ նոր
ծնած կովի սկզբնական կիթը հասնեմատել նրա
մի տարվա ընթացքում տված կաթի ընդհանուր
քանակի հետ՝ համոզվելու համար, թե ինչպես
շատ հաճախ կովի որական կիթը չի համապա-
տասխանում նրա տարեկան կիթին. Դրա հա-
մար ել կովի կաթառատության չափն ու ար-
ված ոգուար վորոշում ե նրա տարեկան կի-
թով. Այդ հանգամանքը բացատրվում ե նրանով,
վոր մի կով իր սկզբնական կիթը լերկար ե
պահում, իսկ մյուսը՝ շուտ իջեցնում, վորի հե-
տևանքով, չնայած իր սկզբի բարձր կիթին,
տարեկերջի հաշվով քիչ կաթ ե տալիս.

Ահա կյանքից վերցրած մի քանի որինակ:
Հունվարին ծնած չորս կով տալիս ելին.

Կովի համար	Օրական կիրք Փունիսեռվ										Տար- կական կիթը	
	Ամիսի սեպտեմբեր											
	1	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	
№ 1	36	30	23	20	15	9	6	—	—	—	—	139 դուր
№ 2	22	20	19	16	16	18	10	7	5	4	—	137 *
№ 3	18	19	18	18	16	16	12	9	8	6	4	144 *
№ 4	35	32	32	30	27	32	19	15	8	6	5	229 *

Կովի համար	Օրական կիրք Կիլոգրամմեռվ										Տար- կական կիթը	
	1	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	
№ 1	14,7	12,3	9,4	8,1	6,1	3,7	2,4	—	—	—	—	1709,6 Լ
№ 2	9,0	8,1	7,8	6,5	6,5	7,4	4,00	2,8	2,0	1,6	—	1685,0 *
№ 3	7,4	7,8	7,4	7,4	6,5	6,5	4,9	3,6	3,2	2,5	1,6	1771,0 *
№ 4	14,3	13,1	13,1	12,3	11,0	13,1	7,8	6,1	3,2	2,5	2,0	2816,5 *

Դուք տեսնում եք, թե առաջին կովը, վո-
րը համաձայն իր սկզբնական կիթի պետք է
վոր բոլորից կաթնառատը լինել՝ տարեկան
հաշվով տպել ե համարյա նույնքան, վորքան
լերկորդը, պակաս, քան լերրորդը և շատ ա-
վելի քիչ, քան չորրորդը. Յերրորդ կովը թեև
նոր ծնած ժամանակ տուաջինից կը կնակի չա-

փով պակաս եր տալիս, այնուամենախիվ, շը-
նորհիվ իր կիթի կայունության ու անվտա-
խության, նրա տարեկան կիթը գերազանցեց
նախորդ յերկուսից:

Չորրորդ կովը, իր սկզբնական բարձր կի-
թը յերկար ժամանակ պահպանելով՝ տարեկեր-
ծին փակուն հետևանքի հասավ: Այդ որինա-
կաց դուք տեսնում եք, թե ի՞նչ խոշոր նշանա-
կություն ունի նախիրի ազնվացման խնդրում
կիթի կայունությունը, ուստի, կաթնառառ կո-
վի ընորություն կատարելիս, յեթե ննարավո-
րություն կա, պետք է տեղեկանալ կիթերի
գրանցումներից, վորոշելու համար՝ թե ի՞նչպես
ե պահպանում նա իր կիթը:

Կիթը չիջեցնող կովերից նախիր կազմելը,
մեծ ու կարևոր խնդիր ե անասնապահի հա-
մար:

Կիթի կայունությունը պիտի նկատի առ-
նել վոչ միայն ամիսների, այլ և տարիների
նկատմամբ: Ինչպես վոր մի քանի կովեր ա-
միսների ընթացքում կայուն են պահում իրենց
կիթը, միաւները՝ վոչ, նույնպես ել տարիների
ընթացքում: ահա մի որինակ ես նույն անտե-
սությունից:

Այսուհեղ եւ ի՞նչպես ե ամիսների կիթի հա-

մեմատության գեղքում ահսնում ենք, վոր
յերկորդ կովը, վոր սկզբի տարում ավելի լավ
կիթ ուներ, քան մյուս յերկուսը: սակայն հե-

Կովի համար	Կիրը սարիների ընթացքում գումարով									Ընդամենը
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	
№ 11	90	150	203	167	221	177	175	134	109	1426 դույլ
№ 26	81	170	192	210	197	210	198	185	125	1568 »
№ 33	113	186	157	144	199	175	131	112	84	1301 »

Կիրը սարիների ընթացքում վեցերով

№ 11	1107	1845	2497	2054	2718	2177	2152	1648	1340	17539 լիոր
№ 26	996	2090	2361	2582	2423	2582	2435	2375	1537	19285 »
№ 33	1390	2287	1931	1771	2447	2152	1611	1377	1033	16000 »

առաջա առրիների ընթացքում, իր կիթի տա-
տանումներով և անհաստատությամբ, նրանցից
յետ և մաս և, իր կրաքարի ընթացքում, յերկո-
րորդից 267 գումար (3284 լիոր) և առաջինից
125 գումար (1537 լիոր) պակաս կաթ տալիս:
Յերկրորդը, իր հերթին, թեև առաջին ծինին
իր կիթով յետ և մաս և առաջինից և հետագա-
յում այնքան ել չի բարձրացնում այն (228 գում),

այնուամենախիվ, իր կիթի կայունությամբ,
վերջին հաշվով, առաջինից առաջ և անցնում:

Բերած որինակներիցս հետեւմ ե, վոր
կաթնառատ կովի և մանավանդ սերունդ ար-
տադրելու համար, անասունների ընտրություն
կատարելիս, շատ կարեոր և հաշվի առնել կի-
թի կայսւնությունը. ամիսների և տարիների
ընթացքում: Դա ի հարկե հնարավոր ե կառա-
րել միայն այն գեղքում, յեթե անտեսության
մեջ թեկուզ հասարակ ձևով, կիթերը զրի են
առնվում: Հարկավոր ե միայն հաշվի առնել կո-
վերի կիթի տարբերությունը, վորպեսզի պարզ
լինի մեզ համար, թե ինչ խոշոր արժեք ու
կարևորություն ունի կիթերի զրի առնելը:
Ինքներդ մտածեցեք. չե՞ վոր յերկորդ կովը,
իր ամբողջ կյանքի ընթացքում 267 դույ (3284
վտր) ավելի կաթ, կամ յեթե դույը հաշվենք
50 կոպեկով՝ 133 ռ. 50 կոպ. ավելի ոգուտ ե
տվել, քան յերրորդը, և 71 ուռբլի ավելի, քան
առաջին կովերը: Հաշվենք, թե վնրքան մեծ
կլինի այդ տարբերությունը ամբողջ նախիրի
նկատմամբ:

Կաթնատվության ցըանի տերկարանեվու-
րյունը.—Առաջին աղյուսակը ցույց է տալիս,
վոր առաջին կովի տարեկան կիթի քիչ
լինելու պատճառներից մեկն ել այն ե, վոր նա

կթվել ե ընդամենը յոթն ամիս, մինչդեռ մյուս
կովերը կթվել են 10—11 ամիս: Ըստինքյան
հասկալի յե, վոր ընդամենը 7 ամիս կթվող
կովը պահելը ձեռնտու չի: Ացպիսի կովեր,
կամ նրանց սերունդից տոհմացու զնելը պարզ
է, վոր միաք չունի սերունդ արտադրելու և ոգ-
տագործելու համար. պետք ե թաղնել անպիսիշ-
ներին, վորսնց կթաշրջանը տեսւմ ե տամն
ամսից ոչ պակաս: Հաճախ գովում են կովին
թե «ծերվեծեր»՝ ծնելուց՝ ծնել կթվում
ե, դա ապացուց է կուրծի լավ գործունե-
լության, վոր ընդունակ ե մինչև հետեւալ
ծնելին աշխատելու, բայց դա զեռ չի նշանա-
կում, թե կարելի յե կովը մինչև ծնելին ել
կթել: Ծնելուց 6—8 շաբաթ առաջ պետք ե
կովին հանգիստ տալ, ուստի «ծերվեծեր» կթե-
լուց խուսափելով, պետք ե աստիճանաբար,
հմտորեն կթելը գաղարեցնել, վորպեսզի կեն-
դանին հանգստանա, ուժերը վերանորոգի և
նոր ծնելուց՝ բարձր կիթ տա:

Կերի հատուցումը.—Կենդանիների բոլոր
հատկությունների ու նշանների մասին ասած-
ներիս նպատակն ե ցույց տալ, թե ինչպես
պիտի կովերի տեսակն ազնվացնելով կազմել
անպիսի նախիր, վոր առ վոչ միայն շատ կաթ,

ալ և շատ ոգուտ: Բանն այն է, վոր շատ կաթ տփող կովը միշտ ել շատ ոգուտ չի տալիս, քանի վոր 2, միասեսակ կիթ տփող կովեր՝ կարող են սպառել տարբեր քանակության կեր: Ուրիշ խոսքով, տարբեր կովեր, տարբեր չափի մարտզական ուժ և արյունից կաթ արտադրելու ընդունակություն ունենալով՝ նույն տեսակի կերից կարող են արտադրել տարբեր քանակության կաթ: Մի փութ կերից ամենաշատ կաթ տալու ընդունակությունը այն ամենաայլեական հատկությունն է, վոր մենք վնասում ենք ամեն կովի մեջ՝ ուստի՝ կաթնառատ կովի ընտրությունը ճիշտ կատարելու համար, կարեոր ե նաև իմանալ, թե նա ինչպես ե հատուցում: իր ստացած կերը: Յերկակայքնք 3 գլխ. միմնուն քաշի կով, վորոնցից յուրաքանչյուրը տարեկան ուտում ե 55 ուռելու զանազան տեսակի կեր, ըստ վորում, մի կովը տալիս ե 100 դուզ (1230 լիտր) կաթ, յերկրորդը՝ 140 դուզ (1722 լիտր) և յերրորդը՝ 200 դուզ (2460 լիտր), նշանակում ե՝ մեկ կովի արտագրած կաթը տիրոջը վրա դուզը նստում ե 55 կոպեկ, մյուսինը՝ 39 կոպեկ, իսկ յերրորդինը՝ $37\frac{1}{2}$ կոպեկ: Ի հարկե, այն կովը, վոր միմնուն կերը ուտելով պակաս կաթ և տա-

լին, քան մյուսը՝ ավելի գեր կլինի, սակայն գա այնքան ել միաթարական չի ըիրոջ համար, վորովհետեւ կովի մսով տերն ոգտվում է մի անգամ, իսկ կաթով՝ ամեն տարի:

Ուրեմն, կաթնառատ կով ընտրելիս պետք է նկատի ունենալ վոչ միայն նրա կիթը, այլ և այն, թե նա ինչ չափով է հպատացում իր ստացած կերը:

Յեթե աստծներիս ավելացնեմ և այն, վոր կով ընտրելիս, բացի կիթի քանակից, պետք է ուշադրություն դարձնել նաև կաթի վորակին, դրանով համարյա ամեն ինչ ասած կլինեմ: Կովերի կաթի յուղալիության տարբերությունը առաջանում է վոչ միայն ցեղական, այլ և նըրանց անձնական առանձնահատկություններից: Միևնուն ցեղում պատահում են ավելի, կամ պակաս յուղալի կաթ տփող կովեր: Հոլլանդական կովի կաթը միջին հաշվով պարունակում է մոտ $3\frac{1}{2}$ լուզ, ջերզեյական (Ճյերզեյսկայ) կամ սիբիրական կովերը՝ $4\frac{1}{2}\frac{0}{0}$ և ավելի. սակայն հենց ուռասկան կովերի մեջ կան անպիսիները, վոր տալիս են $4\frac{1}{2}\frac{0}{0}$ և այնպիսիները, վոր $3\frac{1}{2}\frac{0}{0}$ — 6 ավելի չեն տալիս:

Յենթադենք, թե 2 արտելային յուղագործարաններ կաթ են ստանում դյուղական

նախիլներից։ Առաջին գործարանն ստամում
է 30,000 փութ $3\frac{1}{2}/0$ յուղ պարունակող կաթ,
իսկ յերրորդը նույն քանակության կաթ, մի-
այն $4\frac{1}{2}/0$ յուղ պարունակող։ Առաջին գոր-
ծարանը կատարում է 1050 փութ ($17,200$ կիլոգր.)
զուա յուղ, կամ 1200 փութ ($19,657$ կիլոգր.)
կարագ, իսկ յերկրորդ գործարանը՝ 1350 փութ
($22,114$ կիլոգր.) զուա յուղ, կամ 1543 փութ,
(25275 կիլոգր.) կարագ, այսինքն՝ 193 գիտով
առաջինից ավելի ($2,161$ կիլոգր.), ինչպես
տեսնում եք, անասունների ազնվացումն ըստ
նրանց կաթի յուղալիության, խոշոր նշանակու-
թյուն ունի։

Դժբախտաբար, կովերի ազնվացումը, ըստ
կիրի հատուցման և կաթի յուղալիության, ան-
մատչելի յե մանր տնտեսություններին։ Մի-
այն մեծ նախիր ունեցող տնտեսությունները
հնարավորություն ունեն այդ կանոնները կի-
րառելու. սակայն սա այն դեպքում, յեթե
տնտեսատերերը իրարից անջատ աշխատեն,
յուրաքանչյուրն իր համար։ Յեթե հարկան
անտեսատերերը միանան և կազմեն այսպես
կոչված կոնսորտ միություն, 1—2 կով ունե-
ցողն անգամ կարող ե հետեւ իր անասուննե-
րի տեսակն ազնվացնելու կանոններին։ Այդ-

պիսի կոնսորտ միություններ արտասահմանում
հազարներով կան, վերջին տարիներս մեզ մոտ
ել են հաջաղությամբ կազմակերպվում։

Այդ միությունը կազմակերպել ցանկացող-
ները պայմանագրի կամոններն ու ձեերը կա-
րող են ստանալ կենխգրադից, Հյուսիսային
Պյուղատնտեսական Ընկերությունից, վորն ինքն
ե կազմում այդպիսի միություններ և նպաս-
տում նրանց տարածմանը։

16. Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Զուրուգ Պետութիւնի Բանաձեվերը (սպառված) 15 կ.
17. Օ. Արմենաց - Խոշոր լեզվուրավոր անասունների ժամանակամբ 15 կ.
18. Հ. Օգաստան - Գյուղատնտեսական բանվարությունը և միջազգային կոմունիստական շարժումը (սպառ.) 40 կ.
19. Կ. Խան-Մալյան - Ուղեցույց արդյունավետ խողարուծության 15 կ.
20. Ֆերդինանդով - Հավաքուծ. և նրա սպուտն. (սպառված) 20 կ.
21. Օ. Դանելյան Լավ և ոչ, քան յերբեք (ազրուապիես) 20 կ.
22. Ա.Ա. Մելիք-Շահնազարյան - Կտավատը և կանփը (սպառ.) 20 կ.
23. [REDACTED] - Անդրկովկասի տնտեսական դրությունը (սպառ.) 15 կ.
24. Համանգ Հայաստանի Խ. Օ. Հանրապետության անտառներից փայտեղն բաց բողնելու համար (պաշտօնական)
25. Պետք. Ավ. Քայլանրաւ - Կաթնառու կովի կերակրումը 30 կ.
26. Օ. Օ. Տրիքոնով - Ինչու պետք և ցելը շուտ անել 15 կ.
27. [REDACTED] - Գալուստի վիկը (ազրուապատճենածք) 10 կ.
28. [REDACTED] - Կարտոֆիլի մշակությունը 20 կ.
29. Լ. Սուբբուտին - Կովի զատը (ազրուապիես) 20 կ.
30. Ա. Ա. Մելիք-Շահնազարյան - Տիզկանեփ (սպառ.) 5 կ.
31. Խ. Տեր-Ենոսիսան - Պաղատու ծառերի վնասառուներն ու հիվանդությունները
32. [REDACTED] - Գյուղի հողաշերտությունները
33. Ս. Րազի - Տրակտորը (ազրուապատճենածք)
34. Յալսացի - Խորհրդավոր արտունչն ըստ-զրուցյան

ՀՀ Ազգային գրադարան



NL0290014

35. ԽԵՆԿՈ-ԱՎԵՐ—Գլուղատնտեսանասնաբու
ծը և իր պարուղբուցը
36. Ս. ՅԵՒԳՈՒԼԻՑ—Տասը պատգամ անասնա-
պահին (բ. տպագր.) 20 կ.
37. Մ. ԽԱՆԳԱՊԱՆ—ՄԵՂՎԱՐՈՒԺՈՒԺԻԱՆ գործ-
նական ձեռնարկ 60 կ.
38. [REDACTED]—ՄԵՐ ՎԱՐԴԱՆԱԿԵ-
ԱՌԹԻԱՆ ՀԵՐԹԱԼԿԱԿԱՆ ԽՆԴԲԻՆՆԵՐԻԿ 40 կ.
39. Ս. ԱՐԱԲԱՎԱՆ—Գութան, թէ արոր (սպո.) 10 կ.
40. Վ. ԲԱԿԻՆԸ ԱՅԾՆ աղքատի կովի ե (սպո.) 20 կ.
41. Խ. ՏԵՎ-ԵԵՐԱԲԱՆ—Գոմազրը 20 կ.
42. Խ. ԿՈՎՃԵԿՈՎ—Լինինը և զլուզացիոնիթ. 30 կ.
43. Ա. ՄՈՒԾԵՎԱՆ—Մհանաը պետք և հաշվով
կարել 5 կ.
44. Խ. ՏԵՎ-ԵԵՐԱԲԱՆ—Ինչպես պատվաստել
պարզաբռ ձափերը 10 կ.
45. [REDACTED]—Խոտորջուրի կոմունան 30 կ.
46. Հ. ԱԶԱՏՅԱՆ—Յեռագաշախից զեպի սոցիա-
լիզմ՝ կոսպերացիալի վրայով 1 ա. 50 կ.
47. Վ. Ա. ՄԻՔԱՅԼՈՎ—Տայգարի վարակիչ հի-
վանդությունները 5 կ.
48. Ա. ԹՈՒՄԱՅԻՆ—Վիկ 25 կ.
49. [REDACTED]—Գոմազր 5 կ.
50. ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՍՏԱՏԻԿԻՑ (ՃՈՂԱՎՈՃՈՒ) 20 կ.
51. ՊԵՆՔ. Ա. ՔԱՂԱԿԻՐԱԿ—Լաթնուսատ կովի
ընտրությունն ու նախիրի աղնվացումը 20 կ.

ՊԱՏՐԱՍՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Ա. ՎԵՐԱՄԻՔՅԱՆ—Պաղատու այգին ու նրա խնամքը.
2. [REDACTED]—Վաշնարարությունն.
3. Ա. ԱՐԱԲԱՎԱՆ—Գութանները և նրանց ընտրու-
թյունն ու խնամքը.
4. Ա. ԽԱՆԳԱՊԱՆ—Հանրամատչելի զրուցներ
զինեղործության մասին.
- Դիմել ՅԵՎԵՎԱՆ, Հոգժողկոմատն Հրատարակչության,
Հայկովի կենտրոնական և գավառական
գրախանութներին, Գավհողբաժիններին: